

ՊԱՏՐԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ա. ՆԱՄԱԼԵԱՆԻ

III

ԿԵԱՆՔԻ ՍԻՒՆԵՐԸ.

ՍԵՐԵՆԻ ԶՄԻՐ

Վերջին երեքօրը ես բացակայ էի այստեղից: Մի ծանօթ արհեստագետի հետ գնացի այցելելու մի կանոնաւոր մշակող պղնձահանք: Այդ այցելութեան առիթով պատրաստում եմ տպելու մի յօդւած, որ կ'ուղարկեմ քեզ անյապաղ: Այժմ պատմեմ քեզ մի քանի ճանապարհորդական միջնադէպքեր:

Երկաթուղու գնացքը դուրս է գալիս այստեղից գիշերը: Ուղեկցիս հետ մօտանք վազօնը և մի կերպ տեղաւորւեցինք: Ուղեկիցս յոգնած էր և վճռեց իսկոյն ննջել: Պառկելը և քնելը մէկ եղաւ:

Ես պատուհանից դիտում էի լուանով լուսաւորւած այն շրջակայքը, որով ընթանում էր գնացքը: Ես յուսահատւում էի՝ տեսնելով խորշակած անապատի մեռելութիւնը և մտաբերում էի մեր ընդհանուր աղքատութիւնը և ճնշող անշարժութիւնը: Յետոյ աչքերս յոգնեցին և ես ընկայ ուրիշ մտածմունքների մէջ: Իմ երեւակայութեան առաջ ներկայացաւ միւլնոյն տափարակը կերպարանափոխւած, կենդանացած, լիքը անդաստաններով, այգիներով, դաստակերտներով — կտրատած ջրանցքներով, խճուղիներով — առհասարակ մեծ երթեւեկութեան մէջ... սալեր լի երկրագործական և հանքային արդիւնքներով... երկաթուղու կայարանները բռնւած անվերջ հակերով և այլն:

Յանկարծ իմ մտածմունքներից ինձ սթափեցրեց մի բացահայնութիւն, որ լսեց հարեան ուղեորների կողմից:

—Քանդւելու ենք, բոլորովին քանդւելու, եթէ այսպէսների բերանը փակող չը լինի: Դէ՛, ահա՛ դու միշտ, Գէորգեա՛ն, հրճւում ես այսպիսի գրեթէ քնքերով: Մարտիր այս անհեթեթութիւնները:

—Հը՛, էլի ի՞նչ է պատահել, Սահակեա՛ն. ի՞նչ նոր հրէշներ են աչքիդ երևացել, լսեց մի ուրիշ ձայն:

—Հրէշներից էլ վատ են:

Բարձրացայ տեղիցս, նայեցի դէպի հարեաններս և տեսայ երկու երիտասարդ միմեանց դէմ նստած: Նա, որի անունը Սահակեան էր, ունէր այդ բոպէին բարկացած դէմք, խիստ նալւածք, ձեռքին բռնած էր մի լրագրի համար և վառած մոմ: Միւսը, որի անունը Գէորգեան էր, համեմատաբար հանգիստ տրամադրութեան մէջ էր. նորա երեսին խաղում էր մի դառն ժպիտ:

—Սա ի՞նչ անմիտ թղթակցութիւն է Երևանից գրած, շարունակեց Սահակեանը:

—Կարդացել եմ:

—Կարդացել ես և հաւանում ես:

—Թղթակցութիւն է էլի՛: Ի՞նչ ես մեծ նշանակութիւն տալիս:

—Դու այդպէս թեթեւ ես խօսում. դու մէկ տես թէ այս անգութ թղթակիցը ի՞նչ է գրում:

Եւ Սահակեանը կարդաց հետեւեալը (որը ես արտագրում եմ իմ մօտ եղած լրագրից և որը դու ևս գուցէ կարդացած ես, բայց առանձնապէս ուշադրութեան չես առել).—

«Մեր քաղաքից բաւականին հեռու մի ուխտատեղ կայ, ուր ամենայն տարի խոնուում է մեր նահանգի ժողովրդի մեծ բազմութիւն:

«Ձարմանալի է թէ ո՞ր աստիճան մենք դեռ յետաձգեց ենք: Ամբողջ մի գաւառի մեծութեան տեղ շարժւում է, գործ ու հոգս մոռանում՝ թէ ինչ է մի ուխտատեղ է գնում: Եթէ հաշւենք թէ որչափ գործ է տանը թողնւում, որչափ երեխաներ են տանը մնում կիսախնամ, որչափ ձախորդութիւններ են պատահում և վերջապէս որչափ ծախք է պահանջում այդ ժամանակաւոր ապարդիւն չուն, —

պարզ կը նկատենք, որ մեր պապական այդ տեսակ լիմարութիւնները կրկնելով մենք կորցնում ենք շատ բան...

Հնորերս օտարազգի ուսումնականները կատարեցին մի անգամ ևս յաջող վերելք դէպի Մեծ-Մասիսի գլուխը և այդպիսով ապացուցեցին, որ Մասիսի գլուխը բարձրանալը ամենևին անհնարին չէ, ինչպէս հաւատացնում էին մեզ մեր հնապաշտ տիրացուները Այո', եւրոպական ուսումնականները ոչ միայն ոտքի տակ կը տան մեր սըրբացած Մասիսի կատարը, այլ և մեր բոլոր՝ դարերով կիտած՝ նախապաշարմունքները, եթէ մենք ինքներս չենք շտապիլ օր առաջ թօթափելու մեզնից հնութեան մրուրը, որ ծանր լաստերով նստած է մեր վերայ և որը մենք մեր սեպհական քաղաքակրթական առանձնայատկութիւններից մէկն ենք համարում:

— Լը', ի՞նչ կ'ասես. այսպէս բան կարելի է գրել:

— Փոքր ինչ աւելի է աղ ածել:

— Ինչպէ՞ս թէ՛ փոքր ինչ: Ա՛յ մարդ, այսպէս գրողին ես իմ շէմքից չէի թողնիլ ոտք դնի:

— Է՛հ, դու է՛լ, Հիմա ի՞նչ մի ձախորդութիւն է պատահել: Իսկի չ'արժէ այդպիսի բաների մասին խօսել: Դէ՛ մարդ է, խելքին զօր է տւել ու այդպէս է գրել:

— Բայց ի՞նչ է գրել, Գէորգեա՛ն, ա՛յն ասա:

— Գո ասելը ի՞նչ է. չը լինի՞ Մասիսի գլուխը բարձրանալը դու էլ ես անկարելի համարում:

— Բանն այն չէ՝ բարձրանալ կարելի է թէ չի կարելի — այլ... առհասարակ այդ տեսակ թղթակցութիւններ գրելը յանցանք է: Ի՞նչ հարկաւորութիւն կայ այդպէս շեշտելու՝ հէնց զիցուք՝ Մասիսի գլուխը բարձրանալու վերայ: Այդ ի՞նչ հանդիսաւոր կերպով յայտնելու լուր է: Այդ տեսակ անցքեր կարելի է և լուրթիւնով անցնել: Օհ, օհ, օհ, ի՞նչ մի երեւելի հաճոյք է, որ առիթ եղաւ մեր հնին քացի տալու:

— Եւ ինչո՞ւ չը տանք մի լաւ քացի, երբ մեզ յաջողում է մի քաջագործութիւն անելու. ինչո՞ւ չ'ուրախանանք, երբ մեր միտքը, որ անցեալում կաշկանդւած էր, այժմ բացւում է, նոր ծաւալներ է նւաճում:

— Բայց դա որչա՞փ ուրախալի է մեր տանացի տեսակէտից:

—Միանգամայն ուրախալի է:

—Հ'մ. և ի'նչ յարմար դէպք է գտել ուխտատեղի մասին խօսելու տնտեսական և առողջապահական խորհրդածութիւններ մէջ բերելու. կեցցէ':

—Ասացի՛ մի քիչ խելքին զօր է տւել:

—Զօր է տւել:

Խօսակիցները լռեցին մի քանի րոպէ, յետոյ Սահակեանը ճրագը հանգցրեց, լրագիրը մի կողմ շարտեց և կոտրած ձայնով շարունակեց.

—Եղբայր, այսպէս բան չի լինիլ. ամեն բան քանդում էք, ամեն բան յեղաշրջում էք: Սորա վերջը ո՛ր է: Մեր Խորհնացու պատմութեան առաջին մասը, բոլոր հայկազանց հարստութիւնը, հրատարակել էք առասպելական, սուտ, հնարովի: Մեր անցեալի շքեղ երեսները նսեմացրել էք այնպիսի մանր-մունք կնճիռներով, որ անցեալը դարձել է միայն կոպտութեան և բռնաւորութեան հանդէս:

—Եւ շա՛տ լաւ ենք անում: Առանց այդ տեսակ քննադատութեան չենք կարող առաջ գնալ:

—Ի՞նչ ես դատարկ դուրս տալիս, Գէորգեան, քանդում ենք, բոլորովին քանդում:

—Դէ, բաւական է, է': Այդքա՛ն էլ վախկոտութիւն ամեն մի սուերի տեսքից: Ով գիտէ՝ դու դէմ ես մինչև անգամ ուսում առնելուն:

—Մի տեսակ ուսման դէմ եմ, այո՛: Ես դէմ եմ այն նոր ուսման, որ յուզմունքներ է ձգել մեր երիտասարդների գլխներում: Կրթութիւնը պէտք է լինի մեծ հսկողութեան տակ, նա մանաւանդ մեր կանանցը: Սոցա կրթութիւնը—եթէ տարրականից վեր է—փնասակար է: Կանանց բարձրագոյն կրթութիւնը մեր ժողովրդի դարաւոր ամուր կեանքը, կը կազմալուծի: Ընտանիքը պէտք է երկու գլուխ չ'ունենայ իւր նախագիծները յօրինելու: Միայն մի մարդ կարող է կազմել ընտանեկան նախագիծը:

—Տօ՛, Սահակեան, ինչե՛ր ես խօսում. ո՛ր դարումն ենք ապրում: Եւ դու քեզ դեռ ժամանակակից մարդ ես համարում: Մի՞թէ այդ է քո վերջին տարւայ զգաստանալը, որի մասին այնքան կրկնում էիր երեկ:

— Եղբայր, յոգնեցի՝ լսելով շուրջս այն բոլոր անհեթեթութիւնները: Ես տեսնում եմ, որ քանի սկսում եմ մտածել ձեզ նման՝ կորչում է իմ անդորրութիւնը. իսկ երբ միանում եմ ինձ ծնող-մեծացնողների հետ—զգում եմ մի խորին հաշտութիւն կեանքի հետ, զգում եմ մի հայրենի ներշնչմունք իմ մէջ, մի ջերմացնող ոյժ իմ առօրեայ կեանքի մէջ:

— Վա՛յ մեր գլխին, հազա՛ր վայ: Մեր ժամանակաց երիտասարդը այդ տեսակ մտքեր յայտնի՝—չեմ հասկանում: Ես չեմ կարողանում ըմբռնել քո գլխում կատարուող գործողութիւնը: Եւ դուք ձեզ զգաստացածներին՝ անուն էք տալիս և կամենում էք ձեր սեպհական կուսակցութիւնը և խումբը կազմել: Ի՞նչ երեսով:

— Գէորգեա՛ն, դուք սխալւում էք բոլորեքեանդ և չարաչար սխալւում էք: Պէտք է կեանքի հետ գնաք, երբէք առաջ չը վազելով: Դուք ստիպում էք արագ շարժւել, արագ փոխւել, յուզւել: Եւ յուզմունքի մէջ մի քաղցրութիւն էլ էք զգում: Բայց այդ բոլորը մեր ժողովրդի համար ֆլանս է: Նա պէտք է դանդաղ շարժւի:

— Ի՛նչ որ այդպէս է, Սահակեա՛ն, իջի՛ր վագօնից և գնա՛ ոտքով, կամ ձիով, կամ սալլով: Ել ի՞նչ ես նստել այս արագավազ կառքի մէջ, եթէ դու դանդաղաշարժութեան քարոզիչ ես:

Մի երկու տեղից լսեցին թեթեւ ծիծաղի ձայներ: Այդտեղ նկատեցին խօսակիցները, որ անսպասելի կերպով նոքա ուրիշների ուշադրութեան առարկայ էին դարձել: Բայց Սահակեանը, որ մտադիր չէր շուտով լռելու և զայրացած էր Գէորգեանի խօսակցութեան ծաղրական ոճից, բացականչեց.

— Ամեն բան ծաղրի էք գցել. ես ի՞նչ պսեմ: Դուք՝ ծաղրողներդ՝ մի ժամանակ կը տեսնէք ձեզ անդունդը գլորւած:

— Տօ՛, դէ ինչպէ՞ս չը ծիծաղեմ: Լաւ, լուրջ եմ խօսում: Ասա՛ ինձ կարճ և կտրուկ. դու, որ յուսահատւել ես մեր արածներից, ի՞նչ մի ելք ես գտնում մեր ժողովրդին զարգացնելու համար:

— Այդ ելքերը վաղուց են հնարւած. հէնց թէկուզ՝ տասն պատգամը:

— Ի՞նչ:

— Մովսէսի տւած տասն պատգամը:

— Տօ ծիծաղում ե՛ս, Սահակեա՛ն:

—Լաւ մտածիր և կը տեսնես, որ տասն պատգամի մէջ պարունակւած են մարդկային կենցաղավարութեան հիմնական կանոնները՝ մի՛ սպանիլ, մի՛ խաբիլ, անբարոյական մի՛ լինիլ և այլն. սոքա հիմունքներ չե՞ն:

—Ա՛յ տղայ, դու չես մոռացել քո վանական փոքրաւոր եղած ժամանակ սերտածներդ: Բա՛, քո այս հինգ տարւայ դպրոցում մնալը ջուր կտրեց, գնա՛ց: Ընկերներիդ խօսակցութիւնները, քո մի ժամանակւայ գրքեր կարդալու եռանդը—մի՛թէ այդտեղ պէտք է հասցնէին:

—Իմ բոլոր ուսումից յետոյ, որի մէջ ոչինչ բարոյական մի կէտ չը տեսայ, ես նկատում եմ, որ իմ վանական վարդապետը զոնէ գիտէր բարոյական մի հիմք տալ ինձ: Ես հանաք չեմ անում տասն պատգամի մասին: Շատ եմ համեմատել և նորանից լաւ բան չեմ գտնում:

—Իսկ եթէ զոնէիր—կ'ընդունէի՞ր:

—Գուցէ ոչ. տասն պատգամները փորձանքի միջով անց են կացել ամբողջ դարեր՝ մնալով ամուր: Իսկ ես իմ հնարագիտութիւնով կարող եմ սխալւել:

—Տարօրինակ մի նմուշ ես: Ա՛յ մտածողութեան եղանակ: Եթէ մի տեղ քո մտքերը արտայայտես հրապարակապէս—շատերին կը զարմացնես:

—Բայց ո՛չ ժողովրդի 99 տոկոսին: Եւ դորա մէջ է իմ ոյժը և հանգստութիւնը: Փա՛ռք Աստուծոյ, մեր մտքերը ահա մի քանի տարի է, որ սկսել են յայտնւել այս և այն կողմերից:

—Այսի՞նքն:

—Շատից քիչն էլ դու լսիր: Աւանդականութիւնը պահպանելով՝ ես իմ և ժողովրդի մէջ պահպանում եմ արտաքին կապը—մեզ միացնող կամուրջը. իսկ ոգևորւելով տասն պատգամի իմաստով, որ և մեր ժողովրդի հայեացքի հիմքն է—ես ինձ կապում եմ ժողովրդի հետ ներքին կերպով:

—Եւ այդպէս մենք կարող ենք առաջադիմե՞լ:

—Ինչու չէ, չափաւորութիւն և բարեխառնութիւն—դրքա մեր ժողովրդի բնական խելքի արդիւնքներն են և պէտք է մենք էլ վարակւենք այդ յատկութիւններով: Նախ դեռ հպատակւենք ծիսակատարութիւններին առանց այլեայլութեան:

— Իսկ յետոյ:

— Յետոյ ամեն բան կը գնայ իւր ճանապարհով: Երբ դուք տրամադրէք աւանդութիւնները յարգելու, միւս ձեր գործելիքը ինքն ըստ ինքեան կ'որոշւի:

— Երեւակայեցէ՛ք, որ ես կասկածում եմ:

— Զէք փորձել: Ես ասում եմ, որ տրամադրութիւնը և զգացմունքը նշանակութիւն ունեն կեանքի մէջ:

— Ուրեմն անգործութիւն:

— Եղբա՛յր, ի՞նչ գործ էք դուք ուզում՝ գործ, գործ, գցել էք. ինքներդ էլ չէք իմանում թէ ի՞նչ էք ասում: Կրթեցէ՛ք ժողովրդին, դարձրէ՛ք նորան բարոյական, աշխատասէր, հաստատ իւր կրօնին և պապերից աւանդած սուրբ սովորութիւններին: Ահա՛ գործ, մեծ, անվերջանալի գործ:

Գնացքը մօտենում էր մի կայարանի: Խօսակցութիւնը դադարեց: Ես զգում էի ծարաւ: Վազեցի կայարան մի որ և է ըմպելիք ճարելու, բայց դժբաղդաբար ոչինչ չը գտայ: Զանգակն էլ շուտով տւին և շտապեցրին կառք նստելու: Անբաւական կերպով ես եկայ տեղս և վճռեցի հետեւելու ուղեկցիս օրինակին—այսինքն փոքր ինչ հանգստանալու, մի երկու արշաւ քնելու: Բայց ծարաւութեանս սաստկութիւնը սկսեց ինձ նեղել և քունս փախցրաւ: Երկաթուղու սպասաւորներից մէկը յայտնեց, որ հետեւեալ կայարանում կարող եմ գտնել ցանկացածս: Ես վճռեցի մի արշաւ էլ արթուն մնալու:

Մի փոքր ժամանակից յետոյ Սահակեանը սկսեց տալ Գէորգեանին ինչ որ բացատրութիւններ. բայց խօսում էր համեմատաբար ցածր ձայնով, որը իլնում էր գնացքի աղմուկից: Լսում էին կըցկըտուր խօսքեր, մի քանի գրական մարդկանց անուններ: Գէորգեանը, ժամանակ ժամանակ նետում էր սուր և ծաղրական նկատողութիւններ, որոնցով նա զայրացրաւ Սահակեանին և ստիպեց խօսելու աւելի բարձր ձայնով: Սահակեանը ապացուցանում էր, որ քառաձայն երգեցողութիւնը մեր եկեղեցիներում կը բացի դուռը ներմուծումների համար և կը մնասի:

Յետոյ Սահակեանը սկսեց պատմել իւր գլխին եկած մի անցք, որ Գէորգեանի ծիծաղն էր շարժում: Պատմածի համառօտակի բովանդակութիւնը հետեւեալն էր.

—Մի անգամ նստած պարապում էի ընթերցանութիւնով. յանկարծ ինձ մօտենում է ընկերներիցս մէկը, տալիս է ինձ մի գիրք և ասում է, որ աշխատեմ շուտով կարդալ և առաւօտը իրան դարձնեմ: Առնում եմ գիրքը ձեռքս և սկսում եմ թերթել. մի երեսի վերայ տեսնում եմ խօսում է ընտանիքի մասին և խօսում է շատ տարօրինակ: Գրքի հեղինակը համեմատում է մի քանի վայրերի և քաղաքակիրթ ազգերի ընտանիքների կազմակերպութիւնը և վերջ ի վերջոյ այն միտքն է յայտնում, թէ այժմ ընտանիքի դերը կատարւած է և նա պէտք է իւր իրաւունքները յանձնէ հասարակութեան: Բարկացայ և գիրքը դէն ձգեցի: Փոքր ինչ ման եկայ սենեակումս և դարձեալ վեր առայ ձեռքս գիրքը և սկսեցի թերթել. կանգ առայ մի ուրիշ երեսի վերայ, ուր խօսւում էր ժառանգութեան վերայ. հեղինակը ապացուցանում էր իւր խելքով, որ ժառանգութեան գաղափարը անբարոյական է և առաջարկում էր ժառանգութիւնը յատկացնել հասարակութեան: Դարձեալ բարկացայ և գիրքը փակեցի: Սկսեցի ծխել, սպասելով որ գլուխս փոքր ինչ հանդարտ կերպով ինձ հաշիւ տայ կարդացածիս մասին: Բայց գիրքը ինձ հետաքրքրել էր. հեղինակի գրելու ոճը, որ նմանում էր քարոզի՝ գրաւում էր մարդու: Անբաւական կերպով բացի գիրքը, թերթեցի և սկսեցի կարդալ ծառաների և տէրերի յարաբերութիւնների մասին: Մի երես չէի կարդացած, որ տեսայ գլուխս պտուտ է դալիս: Թերթեցի մի քանի ուրիշ երեսներ—մէկը միւսից սարսափելի: Վեր առի գիրքը, դրեցի սնդուկիս մէջ և բանալիքով փակեցի, որ այլ ևս չը դուրս գայ այնտեղից ինձ անհանգստացնելու: Ամբողջ գիշերը չը կարողացայ քնել: Առաւօտը վեր կացայ, շտապով հանեցի գիրքը և վազեցի ընկերիս մօտ: Գիրքը շաղտեցի երեսին և ասում եմ. ա՛յ անգութ, էլ ինձ պատժելու կերպ չէիր գտե՛լ. այս ի՞նչ գիրք էիր տւել դու իմ ձեռքը, գիշերը ինձնից քունը փախաւ, այժմ էլ՝ երբ բերում էի քեզ մօտ՝ ձեռքս կարծես այրւում էր, զգալով գրքի բովանդակութիւնը:

—Հա՛, հա՛, հա՛, ա՛յ ծիծաղ: Ես լսել էի քեզ հետ պատահած այդ դէպքը, բայց ո՛չ այդ կերպով: Եւ գիտե՞ս այս գիրքը գրողը ով է—մի նախկին հոգևորական, որը գրաււել է ծայրայեղ վարդապետութիւններով: Նա քրիստոնէական գաղափարները աշխա-

տեղ է իբր թէ գործնական կեանքի վերածել: Անհամ մի գիրք է գրել, որովհետեւ խառնել է հին և նոր բաներ, լայն և նեղ հայեացքներ, կրօնական պահանջներ. բայց ծիծաղելին այն է, որ դու վախեցել ես մի այդ տեսակ գրքից և չես կարողացել յաղթել նորան:

— Ո՛չ, յաղթեցի և այնուհետեւ սկսեցի հաւատս կորցնել դէպի գրքերը, նա մանաւանդ այնպիսիները, որոնց հեղինակները իրանց խելքից են դուրս տալիս, ուզում են նոր վարդապետութիւն քարոզել: Այդ ժամանակից սկսեցի մտաբերել իմ մանկական առաջին ուսուցչիս և տեսայ, որ նորա աւանդածը աւելի հաստատուն բան է, քան բոլոր նոր քարոզիչներինը:

— Ա՛յ ճշմարիտ դատողութիւն ես տալիս, մէջ մտաւ մի ուրիշ ուղևոր, որ նստած էր փոքր ինչ հեռու նստարանի վերայ. ես լսեցի բոլոր ասածդ, պարո՛ն, պէտք է խոստովանեմ—շատ ուղիղ ես խօսում: Իմ տղիս օգտիցը ես չեմ կարողանում զալ. ա՛յ, մէկ քեզ պէսի ձեռքը կարողանայի գցել՝ շուտ կը դրսուէր:

Սահակեանը ուրախացաւ այդ քաջալերութիւնից և տաք-տաք շարունակեց.

— Տեսնո՞ւմ ես, Գէորգեա՛ն, սա միայն մէկը չէ, սորա բերանով խօսում են բոլոր ծնողները: Մեր երիտասարդները չեն հասկանում մեր հայրերին և սերունդները թշնամացել են:

— Միթէ՞ դու լուրջ կերպով ես խօսում, Սահակեա՛ն: Մէկ մը տածի՛ր, յետոյ խօսի՛ր: Ի՞նչ ես ասում: Ի՞նչ հաշտութեան, ի՞նչ թշնամութեան մասին ես խօսում:

Մի քանի ուղևորներ խառնեցին խօսակցութեան մէջ և կառքի մէջ բարձրացաւ մի տաք վիճաբանութիւն ¹⁾: Գէորգեանի կուսակիցների թիւը շատացաւ: Մինչև անգամ մի հասակաւոր մարդ սկսեց պաշտպանել նորան և ջրել Սահակեանի հայեացքները: Օրինակ բերաւ հին ժամանակի տգիտութիւնը և այժմեան լուսաւորութիւնը, շեշտեց, որ հինը իւր ոյժերով չի կարողացել մի բան կատարել, մինչդեռ նորը ամեն օր յառաջադիմութիւններ է անում:

Ես սկզբում կարծում էի, թէ միայնակն եմ, որ ունկնդիր եմ

¹⁾ Պատրիկեանի նամակից բաց եմ թողնում մի քանի տողեր, որոնք վերաբերում են գործող անձերի և չալսնի դէպքերի:

երկու երիտասարդների խօսակցութեան: Յետոյ, երբ շատ մարդ միջամտեցին—ես համոզեցի, որ բոլորն էլ սաստիկ հետաքրքրուած են եղել խօսակցութեան նիւթով:

Մի քանի ժամանակից յետ խօսք բացւեց պարբերական թերթում ընդունւած այն սովորութեան մասին, որ քննուած են կեանքի վատ երևոյթները և ծայրացեղ կերպով հարւածում: Սահակեանը այնքան երկար խօսեց այդ ակտի դէմ, որ համակրողներին էլ ձանձրոյթ պատճառեց: Դիւաւոր միտքը այսէր, թէ պախարակելով մեզ, առաջինը՝ մենք միջոց ենք տալիս օտարազգիներին առհասարակ վատ գաղափար կազմելու մեր մասին և յետոյ յարմար դէպքում մեզ յետ դարձնելու մեր ասածները. երկրորդ՝ վիրաւորում ենք ընթերցողի զգացմունքը և ոչինչ կրթողական սնունդ չենք տալիս նորան:

Խօսակիցներից մէկը, պաշտպանելով Գէորգեանին, նկատեց, որ Սահակեանի իդէալները նա տեսնում է իրադրութեամբ Թիւրքիայում և Պարսկաստանում:

Սահակեանը կատաղեց:

—Այո՛, մենք էլ շատ առաջ չենք գնացել: Իսկ ի՞նչ ասեմ այն մեր խելագարներին, որ բաւական չէ՝ ինչ գրում են այստեղի մեր կեանքի վատ երևոյթների մասին, դեռ ասում են ու գրում Թիւրքիայի և Պարսկաստանի ժողովրդի կեանքի մասին: Նկարագրում են նորա առօրեայ կեանքը վատ զոյներով:

—Որ թագցնէք. այնտեղի պակասութիւնները—կարծո՞ւմ էք շատ էլ կը թագցւի:

—Բայց պէտք է թագցնել, բղաւեց Սահակեանը:

—Ինքնախաբէութի՛ւն է, յիմարութի՛ւն է, միամտութի՛ւն է, կրկնեցին մի քանի մարդիկ:

Սահակեանի կուսակիցները սկսեցին ինչ որ բացատրութիւններ տալ: Բայց Գէորգեանը, որ լուռ կերպով ունկնդիր էր աղմկալի վիճաբանութեանը, կարճ կերպով պատասխանեց.

—Այժմ մենք մեծացել ենք, մենք երեխաներ չենք. մեզ խաբելով, մեզ օրօրելով—ոչ մի յառաջադիմութիւն չենք կարող անել: Կեանքը պէտք է քննել անխնայ, բայց միևնոյն ժամանակ պէտք է աշխատել, որ ամենայն մի շարժում կեանքի մէջ կատարւի գիտակցաբար, կշռւած: Մտաւախութիւնով առաջ գնալ չենք կարող:

Խօսակցութիւնները թուլացան: Մօտեցանք նոր կայարանի, ուր շտապեցի իջնելու, որ կարողանամ ծարաւս յաղեցնել:

Նստելով նորից կառք, նկատեցի, որ ամենքը յարմարեցրել են՝ ուղ որչափ կարող է՝ պառկելու և քնելու:

Ես էլ պառկեցի և պատուիրեցի երկաթուղու սպասաւորին զարթեցնելու մեզ՝ իջնելու տեղում: Բայց մի քանի րոպէ գլխիցս չէր հեռանում Սահակեանի անձնաւորութիւնը: Սահակեանի պէս դատող-մտածողները շատ էլ հազազիւտ չեն այստեղի երիտասարդների մէջ. բայց ես մինչև այդ օրը դէպք չէի ունեցել լսելու այդքան երկայն խոստովանութիւններ:

Դեռ մի շաբաթ առաջ պատահեցի մի երկու երիտասարդների, որոնք ծաղրում էին մեր կեանքի նոր պահանջները և իրանք զբաղւած են զանազան կարկատանների մասին տաք-սաք վիճաբանութիւններով:

Մտաբերում եմ հին սերնդի ներկայացուցիչ մեր ծեր քահանայ Տէր-Յովհաննէսին: Ի՞նչ պատուական ծերուկ էր և որչափ կատարեալ էր նորա աշխարհայեացքը, որը թէև հնացած էր, բայց համակարգւած էր և ներդաշնակ բոլոր հին կեանքի պահանջների հետ:

Գալ անգամ կը պատմեմ քեզ իմ ուղեկցի մասին: Նա հետաքրքրական և յարգելի անձնաւորութիւն է:

Ողջոյններ... Քո Ս. Պ.